

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2019-2020 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, պատմության օլիմպիադայի հանրապետական փուլում նախատեսված են նոր տիպի մի քանի առաջադրանքներ, օրինակ՝ աշխատանք ուրվագծային քարտեզի, նկարի, սկզբնաղբյուրի կամ գծապատկերի հետ, որոնք ուսումնական ծրագրի պարզօրինակ վերարտադրության փոխարեն պահանջելու են աշակերտի վերլուծական որոշ հմտություններ:

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՛րբ է տեղի ունեցել Խառանի ճակատամարտը. 0,5 մ.
ա) Բ.ա. 68 թ. բ) Բ.ա. 54 թ.
գ) Բ.ա. 53 թ. դ) Բ.ա. 31 թ.
2. Ո՞ր արքայից է Արշակունիների արքայատոհմի գահակալությունը Հայաստանում դարձել ժառանգական.
ա) Տրդատ I բ) Վաղարշ II 0,5 մ.
գ) Խոսրով I դ) Տրդատ III
3. Որտե՞ղ է հիմնվել Արշակավան քաղաքը. 0,5 մ.
ա) Ոստան Հայոց գավառում բ) Մշո դաշտում
գ) Արարատյան դաշտի հյուսիսում դ) Կոզովիտ գավառում
4. Ո՞վ էր գլխավորում հայ ռազմիկներին «Արյան լճի» ճակատամարտում. 0,5 մ.
ա) Սմբատ Բագրատունի բ) Արտավազդ Մամիկոնյան
գ) Մուշեղ Մամիկոնյան դ) Գուրգեն Արծրունի
5. Ո՞ր թվականին է Տայքի կյուրապաղատությունը բռնակցվել Բյուզանդիային. 0,5 մ.
ա) 966 թ. բ) 1001 թ.
գ) 1021 թ. դ) 1065 թ.
6. Քանի՞ կետից էր բաղկացած Իսրայել Օրու «Պֆալցյան ծրագիրը». 0,5 մ.
ա) 36 բ) 40
գ) 63 դ) 18
7. Ո՞ր կուսակցության անդամ էր ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Գարուն Աղասին. 0,5 մ.
ա) Արմենական բ) Ռամկավար-ազատական
գ) ՍԴ Հնչակյան դ) Հ. Յ. Դաշնակցություն
8. Ե՛րբ է սկսվել Հայկական (բանակային) կորպուսի ձևավորումը. 0,5 մ.
ա) 1917 թ. նոյեմբեր բ) 1917 թ. դեկտեմբեր
գ) 1918 թ. մարտ դ) 1918 թ. մայիս
9. Ե՛րբ է հրապարակվել Հայաստանի անկախության մասին (Ն. Աղբալյանի ձևակերպած) հայտարարության տեքստը: 0,5 մ.
10. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հայկական ո՞ր զորամիավորումն է առաջինը մեկնել ռազմաճակատ: 0,5 մ.
11. Ո՞վ էր գլխավորում հայկական պատվիրակությունը Կարսի խորհրդաժողովում: 0,5 մ.
12. Ո՞ր թվականին է ստեղծվել Թ. Ալթունյանի ղեկավարած հայկական ժողովրդական երգի ու պարի համույթը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա) «Լեռնահայաստան»-ի հռչակումը

- բ) Կարսի պայմանագրի կնքումը
- գ) Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին
- դ) Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի (Հայհեղկոմ) հայտարարությունը Հայաստանի խորհրդայնացման մասին
- ե) Ռուս-թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում
- զ) «Ինքնավար Այունիք»-ի հռչակումը
- է) Հայաստանում իշխանության փոխանցումը բոլշևիկներին և Հայաստանի խորհրդայնացումը

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

- 1. Տիգրան II Մեծ
- 2. Արշամ
- 3. Երվանդ II
- 4. Միհրդատ II
- 5. Միհրդատ VI Եվպատոր
- 6. Պտղոմեոս XII

1	2	3	4	5	6

- ա. Ծովք-Կոմմագենեի թագավոր
- գ. Պարթևստանի թագավոր
- ե. Պոնտոսի թագավոր
- բ. Եգիպտոսի թագավոր
- դ. Մեծ Հայքի թագավոր
- զ. Հայաստանի սատրապ

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա) Եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան 1910 թ. Փարիզում հիմնադրեց Հայ բարեգործական ընդհանուր միությունը:
- բ) 1861 թ. Զմյուռնիայում Հ. Վարդուկյանի հիմնած թատերախումբը տեղափոխվում է Կ.Պոլիս և հանդես գալիս հայերեն ու թուրքերեն ներկայացումներով:
- գ) Մխիթարյան միաբանության կարկառուն ներկայացուցիչ Ղ. Ալիշանը «Ազգապատում» աշխատության մեջ ներկայացրել է հայոց եկեղեցու ամբողջական պատմությունը:
- դ) «Որոգայթ փառաց» գիրքը Հայաստանում սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր և հայ քաղաքական մտքի կարևոր նվաճում:
- ե) XIX դարասկզբին Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկված էր 15 մահալների մեջ:
- զ) 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո իրականացված զանգվածային վերաբնակեցումները հոգուտ հայության վերականգնեցին Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը:
- է) 1794 թ. Մադրաս քաղաքում Հարություն քահանա Շմավոնյանի նախաձեռնությամբ լույս է տեսնում հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարար»-ը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա) «Ազգային սահմանադրություն»-ը արևելահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն էր, որը, Հայոց եկեղեցու առաջարկությամբ, հաստատել էր ցարական կառավարությունը:
- բ) Հայոց մեծ եղեռնից հետո ընդլայնված և ստվարացած հայկական գաղթաշխարհը 1920-ական թվականներից սկսել է անվանվել Սփյուռք:

գ) Հասարակական-քաղաքական այն գաղափարախոսությունը, որի հետևորդները հակված էին պահպանելու կամ վերականգնելու հին կարգերը, հայտնի է ազգայնականություն անունով:

դ) Անտիկ և միջնադարյան ճարտարապետության մեջ շինության այն տեսակը, որի ծածկի՝ իրար վրա բարձրացող երկայնակի քառանկյունները փոքրանալով վերածվում են կոնի, կոչվում է բազիլիկ:

ե) Աքեմենյան տիրապետության շրջանում Հայաստանի տարածքում ստեղծվեցին վարչա-քաղաքական նոր միավորներ՝ ամիրայություններ:

զ) Տոհմը կամ տոհմական համայնքը մայրական գծով արյունակից ազգականներից, հարազատներից կազմված նախնադարյան մարդկանց խումբն էր, որն ավելի կայուն և ամուր էր, քան մարդկային հոտը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 262 թ. Արտաշիր Սասանյանը կործանում է պարթև Արշակունիների թագավորությունը և հիմնադրում պարսից Սասանյան տերությունը՝ Պարսկաստանը:

բ) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքի երկրներում սկսված նոր դարաշրջանը՝ հելլենիզմը, Հայաստանում տևել է շուրջ վեց հարյուր տարի:

գ) Հայ պատմագրության մեջ համաշխարհային (ընդհանուր) պատմության շարադրանքի երկրորդ փորձը կատարել է XIII դ. մատենագիր Վարդան Արևելցին:

դ) Զաքարյաններին հաջողվեց ոչ միայն լիովին ազատագրել Հայաստանը, այլև ազատագրված Հայաստանի մեծ մասն ընդգրկվեց մեկ միասնական հայկական թագավորության մեջ:

ե) Կիլիկիայի արևելքում և Հյուսիսային Ասորիքում Փիլարտոս Վարաժնունու հիմնադրած հայկական գործը ու խոշոր իշխանության կենտրոնը Մարաշն էր:

զ) 1904 թ. օգոստոսի 11-ի ցարական հրովարտակով չեղյալ հայտարարվեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, և վերադարձվեց Հայոց եկեղեցու գույքը:

է) Խորհրդա-թուրքական 1921 թ. Մոսկվայի, ապա նաև Կարսի պայմանագրերով Նախիջևանը ՀՍԽՀ-ի մաս չկազմեց և անցավ Ադրբեջանին:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

Ք.ա. 94 թ. կնքված պայմանագրի (դաշնագրի) համաձայն՝ Ք.ա. 93 թ. գրավվեց Կապադոկիան. շարժական գույքը (ավարը) և բնակչությունը (գերիները) անցան Հայաստանին, իսկ տարածքը միացվեց Պարթևստանին:

Ուղղում. ոչ թե՛ _____ (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ _____ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Կերպարանքով ու տեսքով ահավոր տգեղ էին և զարհուրելի. մորուք չունեին, բայց ոմանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ դնչին: Աչքները նեղ էին ու սրապես, ձայները նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն: Երբ լինում էր, հաճախ էին անհագ ուտում ու խմում, իսկ երբ չկար, ժուժկալ էին»:

ա. Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը:

բ. Ո՞վ է մեջբերման մեջ նկարագրված ցեղերին միավորել ու սկսել լայնածավալ նվաճումներ:

գ. Ե՞րբ են նրանք ամբողջությամբ ավարտել Հայաստանի նվաճումը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ խոսքերն են մեջբերված ստորև. 0,5 մ.
 «Հայրենիքը հզոր է ոչ միայն ռազմական, այլև մշակութային մեծագործություններով»:
 ա) Սկիպիոն Աֆրիկացի բ) Հաննիբալ
 գ) Սերվիոս Տուլիոս դ) Թեմիստոկլես
2. Ո՞վ է Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի հիմնադիրը. 0,5 մ.
 ա) Միքայել III բ) Վասիլ I
 գ) Լևոն VI դ) Կոստանդին VII
3. Ե՞րբ է Ֆրանսիայի սահմանադիր ժողովն ընդունել «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը». 0,5 մ.
 ա) 1789 թ. բ) 1791 թ.
 գ) 1792 թ. դ) 1799 թ.
4. Ո՞վ է մշակել տնտեսական մեծ ճգնաժամը հաղթահարելու «Նոր կուրս» համալիր ծրագիրը. 0,5 մ.
 ա) Ջոն Բեյնս բ) Ֆրանկլին Ռուզվելտ
 գ) Լեոն Բլյում դ) Չարլզ Դաուես
5. Ի՞նչ անունով է պատմության մեջ մնացել Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի համատեղ որոշումը, որի արդյունքում Սուդեթի մարզը բռնակցվեց Գերմանիային. 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

<ol style="list-style-type: none"> 1. Մարաթոնի ճակատամարտ 2. Ակտիումի ճակատամարտ 3. Կաննեի ճակատամարտ 4. Մագնեսիայի ճակատամարտ 	<ol style="list-style-type: none"> ա. Անտիոքոս III բ. Հաննիբալ գ. Միլթիադես դ. Մարկոս Անտոնիոս
--	--

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 ա) 814 թ. Վերդենի դաշնագրով բուն գերմանական հողերը բաժանվեցին Կարլոս Մեծի որդիների միջև:
 բ) Խաչակրաց արշավանքների հետևանքով Արևմուտքի և Արևելքի միջև տնտեսական հարաբերությունները սերտացան և դարձան մշտական:
 գ) Հարյուրամյա պատերազմի ավարտից հետո միավորված Ֆրանսիան դարձավ Եվրոպայի ամենախոշոր ազգային պետությունը:
 դ) XIV դ. կեսից մինչև XVII դ. կեսն ընկած ժամանակահատվածը պատմության մեջ հայտնի է Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջան անունով:
 ե) XV դ. վերջից Իտալիայի խոշորագույն քաղաքներում սկզբնավորվում, ապա ամբողջ Եվրոպայում տարածվում է Վերածննդի (Ռենեսանս) ժամանակաշրջանը:
 զ) Վեստֆալյան հաշտությամբ ավարտված համաեվրոպական առաջին պատերազմից հետո վերածնավորվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2020 թ.